# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

## Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի նիստի (N 4)

7 մայիսի 2019թ. ժամը՝ 15⁰⁰

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Բժշկական սարքավորումների ձեռքբերում» ծրագրի մասին:
(Սոս Գևորգյան)

2. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հատուկ դասընթացներ» ծրագրի մասին:
(Օհանես Յորդեկյան)

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիր քաղաքի Դեմիրճյան փողոցի հարակից տարածքի կանաչապատում և բարեկարգում» ծրագրի մասին:
(Աշոտ Վարոսյան)

4. «Արմդայվինգ սուզորդների ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սուզորդության զարգացում» ծրագրի մասին:
(Տիգրան Աղիզբեկյան)

5. «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Նվիրաբերություն «Այբ» կրթական հանգույց» հիմնադրամին» ծրագրի մասին:
(Տաթևիկ Խալափյան)

6. «Վերջին օրերի սրբերի» բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքների մաքուր խմելու ջրի մատակարարում» ծրագրի մասին:
(Գագիկ Գալստյան)

### 7. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

7.1 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

7.2 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1):

7.3 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին:



7.4 Հայաստանի Հանրապետության ոստիկանության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

7.5 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **(N 1):**

7.6 Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

7.7 Հակոբ Գառնիկի Ճաղարյանի հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին:

7.8 Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 516-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):

7.9 Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ):

7.10 Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1435-Ա որոշմամբ հաստատված ծրագրի ~~շրջանակներում~~ բեռի ներմուծման մասին **N 1** («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

7.11 Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 24-ի N Մ-1019-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

7.12 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 76-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ):

7.13 Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի հոկտեմբերի 15-ի N 197-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Մասիսի զարգացման հիմնադրամ):

7.14 Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 264-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):

7.15 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 77-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն):

7.16 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հացեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին:

**8. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին**
(Արման Բարխուդարյան)

8.1 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 18-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Երևան իմ սեր» հիմնադրամ):

8.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 17-ի N Մ-136-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամ):

8.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-017-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

8.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին **N 1** («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

8.5 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 17-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ):

8.6 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 37-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ):

8.7 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 85-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ):

8.8 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 68-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ):

8.9 Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 511-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն):

8.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ):



8.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1264-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ):

8.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1264-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ):

8.13 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 70-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ):

8.14 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 76-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ):

8.15 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 20-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ):

8.16 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ):

8.17 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 24-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Արմենիան Ֆյուչր» բարեգործական հիմնադրամ):

**9. Այլ հարցեր**

9.1 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 68-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ):

9.2 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 20-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ):

9.3 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 85-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ):

9.4 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 29-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

9.5 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 54-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն):

9.6 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 27-ի N 110-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Մասիսի զարգացման հիմնադրամ):

9.7 Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի մարտի 1-ի N 78-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («Ջերմիկ անկյուն» հիմնադրամ):

9.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 8-ի N Մ-461-Ա որոշմամբ հաստատված ծրագրի ծամկետը երկարաձգելու մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

4/1

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ ապրիլի 2019 թվականի N -Ա

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն 3, ՀՎՀՀ՝ 02507456) իրականացվող՝ 1,991,667 դրամ ընդհանուր արժողությամբ «Բժշկական սարքավորումների ձեռքբերում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01222567) 2019 թվականի ապրիլի 5-ին կնքված N ԱԲՍ-Ն-01/19 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Ն. Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի համար բժշկական սարքավորումների ձեռքբերում՝ 1,991,667 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն

Հայկակ Արշամյան

05 ապրիլի 2019թ.

Բժշկական սարքավորումների ձեռքբերում

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Իրականացնել «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների գնում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /իրավաբանական եւ ֆիզիկական անձինք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀՀ, քաղաք Երեւան, Բաղրամյան պողոտա 26, ՀՎՀՀ՝02507456 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, Նոյեմբերյան քաղաք, առողջապահության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 1.991.667,00 ՀՀ դրամ, որից 1 հատ «Մեմբրանային կլեմենտ 4040 ND»՝ 350.000,00 դրամ, 1 հատ «Ջրի փափկեցնող համակարգ WA-ED 120»՝ 1.641.667,00 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ |

4/1

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019 թ. ապրիլի 05-ից, մինչեւ 24 մայիսի 2019թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից ծրագիրը բարեգործական որակելուց հետո նախատեսվում է «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ից գնել 1 հատ «Մեմբրանային էլեմենտ 4040 ND» եւ 1 հատ Ջրի փափկեցնող համակարգ WA-ED 120» եւ անհատույց հանձնել «Ն.Նաւիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ին: Արժեքը՝ 1.991.667,00 ՀՀ դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի հավելված թիվ 1-ի սարքավորումների ցանկի համաձայն պայմանագրի արժեքը կազմում է 1.991.667,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Նոյեմբերյանի քաղաքապետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու եւ գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվի տեղեկություններ: |

Հայկակ Արշամյան
ՀՀՀ Գործադիր տնօրեն

4/1

# ՏԵՂԵԿԱՆՔ

**Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի որոշման նախագծի վերաբերյալ**

Սահմանված ժամկետներում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կարծիք չի ներկայացվել:

4/1

4/1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

*0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594011*
*էլ. փոստ artak.asatryan@justice.am*

№ 05/14/8263-19
«17» 04 2019

**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԵՐԺ ՎԱՐԱԳ ՍԻՍԵՌՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Սիսեռյան**

Ի պատասխան Ձեր 2019 թվականի ապրիլի 12-ի 02/59.4/17187-2019 գրության՝ հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Բժշկական սարքավորումների ձեռքբերում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

Կատարող՝ Անդրանիկ Ռաշիդյան,
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 29

035/26290-2019
17.04.19

4/1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

17.04.19 N ԱԱ/22.2/5974-2019
Ձեր N ____________

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՍԵՐԺ ՎԱՐԱԳ ՍԻՍԵՌՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիսեռյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի ապրիլի 12-ի թիվ 02/59.4/17187-2019 գրության՝ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Բժշկական սարքավորումների ձեռքբերում» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ Առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆ

16.04.2019

X

VERIFIED OCSP 16.04.2019 17:45:32 GMT+4

Signed by: SMBATYAN ARTYOM 3210860416

Կատարող՝ Նաիրա Փափախյան
դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս (+ 374 60) 80 80 03 14 22

020/25957-2017
17.04.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

4/1

«17» 04 2019թ.
No 13-8/12550-2019

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՍԻՍԵՌՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 12.04.2019թ.
թիվ 02/59.4/17187-2019 գրության

Հարգելի պարոն Սիսեռյան

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Բժշկական սարքավորումների ձեռքբերում» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

4/16/2019

X
ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ, Ն. Բեժանյան,
Հեռ. 060544705

044/25958-2019
17.04.19



ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

4/2

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

___ մայիսի 2019 թվականի N -Ա

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (քաղ. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) իրականացվող՝ 8,808,516 դրամ ընդհանուր արժողությամբ «Հատուկ դասընթացների կրթական» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից կնքված ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 01506928) 2019 թվականի ապրիլի 1-ին կնքված N AGBU/ARM-2019-1/MOD պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի կազմակերպում՝ 6,834,916 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 01506928) 2019 թվականի ապրիլի 1-ին կնքված N AGBU/ARM-2019-2/MOD պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական ծառայությունների մատուցում՝ 1,973,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարած աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)**
**Հայաստանի ներկայացուցչության տնօրեն**

***Թալար Կազանջյանի կողմից***

8 մայիսի 2019

**ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հատուկ կրթական ծրագիրը նախատեսված է ՀՀ ՊՆ աշխատակիցներին համապարփակ գիտելիքներ ներկայացնելու Ադրբեջանի հանրապետության պատմության, հասարակության (աշխարհագրություն, վարչատարածքային բաժանում, ժողովրդագրություն, լեզվական և էթնիկ խմբեր, կրոն, ազգային էլիտաներ), տնտեսության, իշխանության և ներքին ու արտաքին քաղաքականության (իշխանության կառուցվածք, կուսակցություններ, գաղափարախոսություններ, ԶԼՄ-ներ, ադրբեջանական սփյուռք) և զինված ուժերի ու անվտանգության համակարգի մասին: Կրթական ծրագրի առանցքային բաղադրիչն է ադրբեջաներեն լեզվի երկմակարդակ խորացված դասընթացը՝ նախատեսված ադրբեջաներենի ռազմական, քաղաքական և առօրյա բառապաշարին տիրապետող մասնագետներ, ինչպես նաև թարգմանիչներ պատրաստելու համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), 55 Արևելք, 59-րդ փող. Նյու Յորք, NY 10022-1112: |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 8,808,516 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ընտրված մասնակիցներ: Ցանկը հաստատվում է նախարարի կողմից: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2019թ. մայիսի 8-ից մինչև դեկտեմբերի 31-ը: |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նախատեսվում են ընդհանուր առմամբ 7-ամսյա դասընթացներ ՀՀ ՊՆ կողմից ընտրված աշխատակիցների համար ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի՝ այդ թվում լինգաֆոնային դասասենյակներում: Դասընթացները անց են կացվելու շաբաթական 5 օր՝ յուրաքանչյուր օր՝ 2 առարկա՝ յուրաքանչյուր առարկան՝ 2 ակադեմիական ժամ տևողությամբ: Դասընթացների ընդհանուր բյուջեն կազմում է 6,834,916 (վեց միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար ինը հարյուր տասնվեց) դրամ՝ առանց ԱԱՀ:<br><br>Տեղեկատու-ձեռնարկի և ուսումնաօժանդակ ձեռնարկի մշակում և տպագրություն՝ յուրաքանչյուրը՝ 100-ական օրինակ, որն ամբողջությամբ և անհատույց տրամադրվելու է ՊՆ-ին և որի բյուջեն կազմում է 1,973,600 (մեկ միլիոն ինը հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր) դրամ առանց ԱԱՀ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Երևանի պետական համալսարանին պատվիրել հետևյալ ծառայությունները՝<br>- Դասընթացների մշակում և կազմակերպում 6,834,916 (վեց միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար ինը հարյուր տասնվեց) դրամ արժողությամբ, առանց ԱԱՀ:<br>- Տեղեկատու-ձեռնարկի և ուսումնաօժանդակ ձեռնարկի մշակում և տպագրություն՝ յուրաքանչյուրը՝ 100-ական օրինակ 1,973,600 (մեկ միլիոն ինը հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր) դրամ արժողությամբ, առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ մարմինների հետ | ՀՀ ՊՆ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Յուրաքանչյուր թեմայի ավարտին մասնակիցները հանձնելու են գիտելիքի ստուգման թեստեր՝ գնահատելու համար մասնակցի առաջադիմությունը:<br>Ֆինանսական և նկարագրային հաշվետվություններ են ներկայացվում Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչությանը:<br>ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով: |

4/2

## ՏԵՂԵԿԱՆՔ

Սահմանված ժամկետներում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կարծիք չի ներկայացվել:

4/2


## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

*0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594011*
*էլ. փոստ artak.asatryan@justice.am*


N º 05/14/8141-19
«16» 04 2019թ.

**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ**
**ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ՍԵՐԺ ՎԱՐԱԳ ՍԻՍԵՌՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Սիսեռյան**

Ի պատասխան Ձեր 2019 թվականի ապրիլի 10-ի 02/59.3/17237-2019 գրության՝ հայտնում ենք, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից կողմից իրականացվող «Հատուկ դասընթացների կրթական» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ


Կատարող՝ Անդրանիկ Ռաշիդյան,
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 29


035/25883-2019
16. 04. 2019թ.

4/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

«23» 04 2019 թ.
№ ՊՆ/01/28/369-2019

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
Ս.ՍԻՍԵՌՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիսեռյան,

Ի պատասխան Ձեր 02/59.3/17237-2019 գրության հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունում ուսումնասիրվել է ՀՀ փոխվարչապետ Տ.Ավինյանի «Հայկական բարեգործական ընդհանուր միության՝ Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հատուկ դասընթացների կրթական» ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Հաշվի առնելով, որ ծրագրով նախատեսվում է ՀՀ զինված ուժերի կարիքներով պայմանավորված անհատույց վերապատրաստումներ, այն բարեգործական որակելը գտնում եմ հիմնավորված:

Հարգանքով՝

23.04.2019

X [signature]

Signed by: BALAYAN GABRIEL 3910770312

Դ.ՏՈՆՈՅԱՆ

01/27749-2019
23.04.2019թ.

4/2

Կատ. Հ. Սուքիասյան
Հեռ. 010-294428

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 44 39, ՖԱՔՍ՝ (+374 10) 66 32 34, ԷԼ.ՓՈՍՏ՝ minister@mil.am

4/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

«16» 04 2019թ.
No 13-8/12330-2019

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՍԻՍԵՌՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 10.04.2019թ.
թիվ 02/59.3/17237-2019 գրության

Հարգելի պարոն Սիսեռյան

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հատուկ դասընթացների կրթական» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

4/16/2019

X

ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ, Ն. Բեժանյան,
Հեռ. 060544705

044/25788-2019
16.04.2019թ.

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

4/3

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

ապրիլի 2019 թվականի N -Ա

**«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2.2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 14-րդ կետին համապատասխան՝*

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) իրականացվող՝ 65,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Տաշիր քաղաքի Դեմիրճյան փողոցի հարակից տարածքի կանաչապատում և բարեկարգում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ 07203481) կողմից «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2019 թվականի մարտի 14-ին կնքված N 11-L պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պորտլանդցեմենտի ձեռքբերում՝ 2,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
(արձանագրություն թիվ 4/19)
09 ապրիլի 2019թ.
հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Աշոտ Վարոսյան

**«Տաշիր քաղաքի Դեմիրճյան փողոցի հարակից տարածքի կանաչապատում և բարեկարգում» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Տաշիր քաղաքի Դեմիրճյան փողոցի հարակից տարածքի կանաչապատման և բարեկարգման աշխատանքների իրականացումը պայմանավորված է առկա անցուղիների կիսաքանդ վիճակով և քաղաքի գլխավոր փողոցի հարակից տարածքը ավելի բարեկարգ դարձնելու անհրաժեշտությունով: |
| 2. | Ծրագրի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների զծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 4. | Ծրագրի կատարողը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղ. Տաշիր, քաղաքաշինության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 65,000,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Լոռու մարզ, ք.Տաշիրի քաղաքային համայնքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2019 թվականի մայիսի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 30-ը: |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Տաշիր քաղաքի Դեմիրճյան փողոցի հարակից տարածքի 1500 ք.մ քայլուղիների բարեկարգման և արտաքին լուսավորության աշխատանքներ՝ 42,000,000 դրամ;<br>Տաշիր քաղաքի Դեմիրճյան փողոցի հարակից տարածքի կանաչապատման և հողային աշխատանքներ՝ 23,000,000 դրամ<br>Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև - 30.12.2019թ. |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալվում է ծառայությունների մատուցման, Հայաստանի Հանրապետության տարածքում շինարարական նյութերի և ապրանքների ձեռք բերման դիմաց հարկային արտոնություններ:<br>1. 1 500 ք.մ քայլուղիների բարեկարգման աշխատանքներ՝ 5,000,000 դրամ,<br>2. 1 500 ք.մ քայլուղիների շինանյութերի ձեռքբերում՝ 25.000.000 դրամ<br>3. 12 000 ք.մ տարածքի հողային աշխատանքներ՝ 3.000.000 դրամ<br>4. 12 000 ք.մ տարածքի արտաքին լուսավորության ձեքբերում՝ 7,000,000 դրամ,<br>5. 1000 հատ ծառերի, տնկիների ձեռքբերում՝ 20.000.000 դրամ<br>6. 1000 հատ ծառերի, տնկիների տնկման և հողային աշխատանքներ՝ 3.000.000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չի նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Լոռու մարզ, Տաշիր քաղաքի համայնքապետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: |

4/3


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 044
Վեբ կայք՝ www.minfin.am


22. 04. 19թ
№ 1/14-2/6662-2019

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԵՐԺ ՎԱՐԱԳ ՍԻՍԵՌՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
19.04.2019թ. N 02/59.2/17951-2019 գրության

Հարգելի պարոն Սիսեռյան

ՀՀ փոխվարչապետի ««Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիր քաղաքի Երևանյան փողոցի հարակից տարածքի կանաչապատում և բարեկարգում ծրագիր» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ որոշման նախագծի 2-րդ կետում նշված «Տաշիր» բարեգործական հիմնադրամի և «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի միջև 14.04.2019թ. կնքված ~~N 11-Լ պայմանագրի~~ գինը անհրաժեշտ է համապատասխանեցնել պայմանագրի 2.2 կետով նախատեսված գործարքի գնին, իսկ ծրագրի 10-րդ կետում անհրաժեշտ է առանձնացված նշել ապրանքների և ծառայությունների ձեռքբերում ենթադրող գործարքները, այդ թվում նաև նախագծի 2-րդ կետում նշված ապրանքի ձեռքբերման գործարքը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

4/20/2019

X

VERIFIED OCSP 20/04/2019 10:58:43 GMT+4

Signed by: HARUTYUNYAN VAZGEN 3703770104 ՎԱԶԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան, հեռ.011 910-437

22. 04. 19թ
№ 034/27103-2019

---

4/3


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ**
**ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594011
Էլ. փոստ artak.asatryan@justice.am


N° 05/14/8705-19
«22» 04 2019.

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԵՐԺ ՎԱՐԱԳ ՍԻՍԵՌՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Սիսեռյան**

Ի պատասխան Ձեր 2019 թվականի ապրիլի 19-ի 02/59.2/17951-2019 գրության՝ հայտնում ենք, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիր քաղաքի Երևանյան փողոցի հարակից տարածքի կանաչապատում և բարեկարգում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Կատարող՝ Անդրանիկ Ռաշիդյան,
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 29

22. 04. 19թ
№ 035/27386-2019

4/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"22" 04 2019թ.
N.01/15.1/3677-19

Բարեգործական ծրագրերի համակարգման
խորհրդակցական հանձնաժողովի նախագահ
Ս. Սիսեռյանին

*Ի պատասխան Ձեր 15.04.2019թ.և 19.04.2019թ.*
*N 02/59.2/17951-2019 02/59.2/17951-2019 գրությունների*

Հարգելի պարոն Սիսեռյան

«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1264-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» որոշման նախագիծը և ներկայացված ծրագիրը չեն համապատասխանում միմյանց:

«Տաշիր քաղաքի Երևանյան փողոցի հարակից տարածքի կանաչապատում և բարեկարգում ծրագիրը» որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ չունենք:

22.04.2019

X
VERIFIED OCSP 22.04.2019 13:32:46 GMT+4

Հարգանքով՝ Signed by: PAPIKYAN SUREN 3604860490

Ս. Պապիկյան

Տարածքային կառավարման վարչություն

22. 04. 19թ
№ 025/27319-2019

---

4/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

«22» 04 2019թ.
No 06/3-8/13769-2019

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՍԻՍԵՌՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 19.04.2019թ.
թիվ 02/59.2/17951-2019 գրության

Հարգելի պարոն Սիսեռյան

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիր քաղաքի Երևանյան փողոցի հարակից տարածքի կանաչապատում և բարեկարգում ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք նախագծի 2-րդ կետում նշված «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ 14.03.2019թ-ին կնքված N 11-L պայմանագրային արժեքը համապատասխանեցնել կից ներկայացված գործարքը հիմնավորող պայմանագրի արժեքին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

4/22/2019

X
ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ, Ն. Բեժանյան,
Հեռ. 060544705



22. 04. 19թ
№ 044/27152-2019

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիր քաղաքի Դեմիրճյան փողոցի հարակից տարածքի կանաչապատում և բարեկարգում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության դիտողության և առաջարկության վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի 2-րդ կետում նշված «Տաշիր» բարեգործական հիմնադրամի և «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի միջև 14.04.2019թ. կնքված N 11-Լ պայմանագրի գինը անհրաժեշտ է համապատասխանեցնել պայմանագրի 2.2 կետով նախատեսված գործարքի գնին, իսկ ծրագրի 10-րդ կետում անհրաժեշտ է առանձնացված նշել ապրանքների և ծառայությունների ձեռքբերումն ենթադրող գործարքները, այդ թվում նաև նախագծի 2-րդ կետում նշված ապրանքի ձեռքբերման գործարքը: | 1.Դիտողությունները ընդունվել են՝ որոշման նախագիծը և ներկայացված ծրագիրը խմբագրվել են:<br>2. Կազմակերպությունը ծրագրի խմբագրված տարբերակում փոխել է նաև փողոցի անվանումը (Երևանյանի փոխարեն Դեմիրճյան): |
| **Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի դիտողության և առաջարկության վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք նախագծի 2-րդ կետում նշված «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ 14.03.2019թ-ին կնքված N 11-Լ պայմանագրային արժեքը համապատասխանեցնել կից ներկայացված գործարքը հիմնավորող պայմանագրի արժեքին: | Որոշման նախագիծը խմբագրվել է՝ հաշվի առնելով արված դիտողությունը: |

4/3

4/3

«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ «TASHIR» CHERITABLE FUND
ՀՀ, ք. Երևան, Խորենացու փողոց 33 Khorenatzi st. 33, Yerevan, 375010, RA
Հեռ: (3741)-54 53 05 Tel: (3741)-54 53 05
Հեռ/ֆաքս: (3741)-545435 Tel/Fax: (3741)-54 54 35

№ 007 «30 » ապրիլի 2019թ.

ՀՀ Ֆինանսների նախարարության
Գլխավոր քարտուղար
պարոն Վազգեն Հարությունյանին

պատճեն

Բարեգործական ծրագրերի համակարգման
խորհրդակցական հանձնաժողովի նախագահ
պարոն Սերժ Միսեռյանին

Հարգելի պարոն Հարությունյան

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության 2019 ապրիլի 22-ի թիվ 1/14-2/6662-2019 գրության Ձեզ եմ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիր քաղաքի Դեմիրճյան փողոցի հարակից տարածքի կանաչապատում և բարեկարգում» ծրագրի լրամշակված տարբերակը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ծրագրի վերնագրում տեղ գտած փողոցի անվանման փոփոխությունը պայմանավորված է նախատեսվող տարածքը Տաշիր քաղաքի Դեմիրճյան փողոցին ավելի մոտ գտնվելու հանգամանքով:

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի տնօրեն Ա. Վարոսյան

095.8/29900
30 05 19